



Առաջարկում ենք ընթերցել ՀՀ-ում գործող բանկերից մեկի կողմից պատրաստված նյութը քարտային զեղծարարությունների մասին: Քանի որ մեր օրերում քարտային զեղծարարությունների դեպքերը հաճախակի են դարձել, ապա անհրաժեշտ է լինել տեղեկացված, որպեսզի խուսափեք նման զեղծարարությունների գոհր դառնալուց:

Հայաստանի Հանրապետության որոշ բանկումատներում հայտնաբերվել են քարտապանի տվյալները ձայնագրող սարքեր՝ հետագայում զեղծարար գործարքներ կատարելու նպատակով: Նմանատիպ դեպքերից խուսափելու համար խորհուրդ է տրվում հետևել հետևյալ ցուցումներին:

### **Խնդրում ենք լինել ուշադիր:**

Նկարի ձախ մասում պատկերված է իրականին շատ մոտ քարտ ընդունող սարք, սակայն սարքի վերևի հատվածում երևում է մի հատված, որը չի համապատասխանում գործարանային արտադրանքին: Նկարի աջ մասում դուք տեսնում եք գործարանային արտադրանքը:




Բանկոմատի քարտ ընդունող սարքը և ստեղնաշարը պետք է լինեն ներկառուցված, առանց արտաքինից ամրացված լինելու որևէ տարբերանշանի: Ներքոնշյալ նկարում երևում են սոնձի հատվածներ:



Բանկոմատի վրա չպետք է ամրացված լինեն տարբեր գույազդային նյութեր, կողմնակի սարքեր, հատկապես ստեղնաշարի մոտակայքում: Նման սարքերի միջոցով հնարավոր է ձայնագրել Ձեր կողմից մուտքագրվող ՊԻՆ կոդը:



ՊԻՆ կոդ մուտքագրելիս պարտադիր ծածկեք ստեղնաշարը ձեռքով:



Ստորև ներկայացված նկարները պատկերում են գործարանային արտադրության բանկոմատներ:

